

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի  
քաղաքականություն II  
(P173686)**

**Բնապահպանական և սոցիալական հանձնառության պլան  
(ԲՄՀՊ)**

**Հունիս 2020թ.**

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԼԱՆ**

1. Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԵՆ) կիրականացնի Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականություն II ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներգրավմամբ: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (այսուհետ՝ Բանկ) համաձայնվել է ֆինանսավորում տրամադրել ԱՃԳԾԱ հավատարմագրային հիմնադրամի միջոցով:
2. ՏԿԵՆ-ը կիրականացնի էական միջոցառումներ և գործողություններ, որպեսզի Ծրագիրը իրականացվի Բնապահպանական և սոցիալական ստանդարտների (ԲՍՍ) համաձայն: Սույն Բնապահպանական և սոցիալական հանձնառության պլանը (ԲՄՀՊ) սահմանում է էական միջոցառումներ և գործողություններ, ցանկացած հատուկ փաստաթղթեր և պլաններ, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի ժամկետները:
3. ՏԿԵՆ-ը կհետևի նաև Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի (ՇՆՊ) դրույթներին և տվյալ փաստաթղթում սահմանված ժամկետներին:
4. ՏԿԵՆ-ը պատասխանատու է ԲՄՀՊ-ի բոլոր պահանջների համապատասխանության և ՀՏՁՀ-ի կողմից իրականացվող հատուկ միջոցառումների իրականացման համար:
5. Սույն ԲՄՀՊ-ում սահմանված էական միջոցառումների և գործողությունների իրականացումը կմշտադիտարկվի և կգեկուցվի Բանկին ՏԿԵՆ-ի կողմից, ինչպես որ պահանջվում է ԲՄՀՊ-ով, իսկ Բանկը կմշտադիտարկի և կգնահատի էական միջոցառումների և գործողությունների առաջընթացը և ավարտը Ծրագրի ողջ իրականացման ընթացքում:
6. Ինչպես որոշվել է Բանկի և ՏԿԵՆ-ի կողմից, ծրագրի իրականացման ընթացքում սույն ԲՄՀՊ-ն կարող է ժամանակ առ ժամանակ վերանայվել՝ Ծրագրի փոփոխությունների և չնախատեսված հանգամանքների ճկուն կառավարումը արտացոլելու համար, կամ ԲՄՀՊ-ի շրջանակում իրականացված Ծրագրի կատարողականի գնահատման արդյունքում: Նման հանգամանքներում, ՏԿԵՆ-ը փոփոխությունները կհամաձայնեցնի Բանկի հետ, և ԲՄՀՊ-ն կլրամշակվի փոփոխություններն արտացոլելու համար: ԲՄՀՊ-ի փոփոխությունների վերաբերյալ համաձայնությունը կփաստաթղթավորվի Բանկի և ՏԿԵՆ-ի միջև ստորագրված նամակների փոխանակման միջոցով: ՏԿԵՆ-ը անմիջապես կբացահայտի լրամշակված ԲՄՀՊ-ն:
7. Եթե Ծրագրի իրականացման ընթացքում Ծրագրի փոփոխությունները, չնախատեսված հանգամանքները կամ Ծրագրի կատարողականը հանգեցնեն ռիսկերի և ազդեցությունների փոփոխությունների, ՏԿԵՆ-ը լրացուցիչ միջոցներ կապահովի՝ անհրաժեշտության դեպքում նման ռիսկերին և ազդեցություններին ուղղված միջոցառումներ և գործողություններ իրականացնելու համար:

ԷԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՄԻՆ
<b>ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b>			
A	<p><b>ԿԱՆՈՆԱՎՈՐ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b></p> <p>Պատրաստել և Բանկին ներկայացնել կանոնավոր մոնիտորինգի հաշվետվություններ ԲՄՀՊ-ի իրականացման, շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների, և բողոքների մեխանիզմի գործելու վերաբերյալ:</p>	Ծրագրի իրականացման ընթացքում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ	ՏԿԵՆ
B	<p><b>ՂԵՊՔԵՐ և ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ</b></p> <p>Բանկին անմիջապես ծանուցել ցանկացած ղեպքի կամ դժբախտ պատահարի մասին, որոնք ունեն կամ կարող են ունենալ զգալի բացասական ազդեցություն հանրության կամ աշխատողների վրա, այդ թվում նման ռիսկեր ներկայացնող շահերի բախման կամ բողոքների, կամ ՄՇԲ և ՄՈ ցանկացած ղեպքի, հարկադիր կամ մանկական աշխատանքի մասին:</p> <p>Ներկայացնել բավարար մանրամասներ ղեպքի կամ դժբախտ պատահարի մասին՝ նշելով ձեռնարկված անհապաղ միջոցառումները կամ որոնք նախատեսվում են ձեռնարկել դրանք լուծելու համար, և ցանկացած կապալառուի և վերահսկող կազմակերպության կողմից ներկայացված ցանկացած տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում: Հետագայում, Բանկի պահանջով պատրաստել հաշվետվություն ղեպքի կամ դժբախտ պատահարի վերաբերյալ և պռաջարկել միջոցառումներ դրանց կրկնությունը կանխելու համար:</p>	Ղեպքի կամ դժբախտ պատահարի մասին տեղեկանալուց հետո 48 ժամվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով տեղեկացնել Բանկին: Պահանջի դեպքում, ներկայացնել հաշվետվություն Բանկի համար ընդունելի ժամկետում:	ՏԿԵՆ
<b>ԲՄՍ 1: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ և ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>			

ԷԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՄԻՆ
<p>1.1 <b>ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ</b></p> <p>Ստեղծել և պահպանել կազմակերպական կառուցվածք ծրագրի իրականացման ընթացքում ԲՄՀՊ համապատասխանությունը մշտադիտարկելու համար: Այն կներառի առնվազն ՀՏՁՀ-ում նշանակված անձնակազմ, որը պատասխանատու կլինի աշխատանքի կառավարման և շահագրգիռ կողմերի ներգրավման պահանջների մոնիտորինգի համար՝ համաձայն սույն ԲՄՀՊ-ի, ինչպես նաև նշանակված Բնապահպանական և սոցիալական մասնագետ և Հաղորդակցման մասնագետ Խորհրդատուի թիմում/երում, որոնք պատասխանատու կլինեն հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի բնապահպանական և սոցիալական բաժինների պատրաստման և շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների իրականացման համար:</p>	<p>Կազմակերպական կառուցվածքը կստեղծվի Համաշխարհային բանկի կողմից Դրամաշնորհը հաստատվելուց հետո 90 օրվա ընթացքում:</p> <p>Վերոգրյալ կազմակերպական կառուցվածքը կպահպանվի Ծրագրի իրականացման ընթացքում:</p>	<p>ՏԿԵՆ</p>
<p>1.2 <b>ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ</b></p> <p>Ապահովել, որ Հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության փաստաթղթի մշակման Խորհրդատվական հանձնարարության(ների) Առաջադրանքի պայմանները ներառեն համապատասխան բնապահպանական և սոցիալական կայունության ռիսկերի գնահատում՝ Համաշխարհային բանկի ԲՄՍ-ների (գոյություն ունեցող գրականության հիման վրա, եթե կիրառելի է) և քաղաքականության գործողության վերաբերյալ համապատասխան առաջարկությունների համաձայն:</p> <p>Իրականացնել ՇՆՊ-ում նկարագրված շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները և դրանց վերաբերյալ կազմել կանոնավոր հաշվետվություններ:</p>	<p>ԱՊ-ի ԲՄ-ին առնչվող բաժինները կբացահայտվեն նախքան Բանկի կողմից դրամաշնորհի հաստատումը:</p> <p>Ծրագրի իրականացման ընթացքում</p>	<p>ՏԿԵՆ</p>

**ԲՄՍ 2: ԱՇԽԱՏՈՒԺ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ԷԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՂՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՄԻՆ
<p>2.1 <b>ԱՇԽԱՏՈՒԺ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ</b></p> <p>Ընդունել և իրականացնել աշխատանքի կառավարման պահանջներ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> <li>• Համապատասխան բողոքների արձագանքման մեխանիզմ, որը հասանելի կլինի ծրագրի բոլոր աշխատակիցների համար</li> <li>• Ծրագրի աշխատանքներն իրականացնող բոլոր աշխատակիցների կողմից ընդունված և ծրագրի բոլոր աշխատողների կողմից ստորագրված Վարքագծի կանոնադիրք, որը կներառի Սեռական շահագործման և բռնության, ինչպես նաև Սեռական Ոտնձգության արգելք:</li> <li>• Հարկադիր և մանկական աշխատանքի արգելք՝ ՀՀ օրենսդրության և ԲՄՍ 2-ի համաձայն:</li> </ul>	<p>Ընդունել պահանջները նախքան ծրագրի աշխատանքների մեկնարկը և իրականացնել ամբողջ ծրագրի ընթացքում</p>	<p>ՏԿԵՆ</p>
<b>ԲՄՍ 3: ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ և ԱՂՏՈՏՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>		
<b>ԲՄՍ 4: ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 5: ՀՈՂԻ ՁԵՆՔԲԵՐՈՒՄ, ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄ և ՈՉ ԿԱՄԱՎՈՐ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 6: ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 7: ԲՆԻԿՆԵՐ/ ՍՈՒՔ-ՄԱՀԱՐՅԱՆ ԱՖՐԻԿԱՅԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՐԵՆ ԶՍՊԱՀՈՎՎԱԾ ՏԵՂԱԿԱՆ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 8: ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 9: ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ</b>		
	Ծրագրի համար տեղին չէ	
<b>ԲՄՍ 10: ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ</b>		

ԷԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԺԱՄԿԵՏ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ/ՄԱՐՄԻՆ
<p>10.1 <b>ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՊԼԱՆԻ ՄՇԱԿՈՒՄ և ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ</b></p> <p>Թարմացնել, ընդունել և իրականացնել Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան (ՇՆՊ), այդ թվում ներգրավման տարբեր մեխանիզմներ, դրանց նախնական ժամկետները, դերերը և պատասխանատվությունները, ինչպես նաև ՇՆՊ գործողությունների իրականացման համար հատկացված ռեսուրսները:</p>	<p>Ծրագրի իրականացման ընթացքում</p>	<p>ՏԿԵՆ</p>